

ՎԱՀԱՆ ՄԻՒԱԽՈՐԵԱՆ

ԱՐԴԱՀԻՒՐՔԻ ՕՐԵՐ

IV

ԱՆԴԱՌՆԱԼԻ ԵՐԹ

Անյայտութիւներով լի, արճիծի պէս ծանր գիշերը վերջապէս լուսացաւ։ Անձրեւը, կարծես թէ սրբել, լւացել էր երկինքը, որը այժմ իր խստադէմ, առաքինի կապոյտը տարածել էր քարւանարայի վրա։

Վաղ առաւօտից ոտքի վրա էին բոլորը սպասում էին հրահանդի քարւանարայից դուրս դալու համար։ Ոչ թէ մէկ գիշեր, այլ կարծես թէ շա՞տ տարիներ էին անցել։ Հասարակութիւնը արդէն իսկ նման էր մաշւած, քայլայւած դաղթականների բազմութեան։ Մարդիկ հնամաշ հազուստներ էին հազել եւ ընդհանուր միապաղացութեան մէջ հարուստն ու աղքատը դժւար էր տարրերել։ Կանանցից ոմանք այնքան էին այլանդակւել, որ դրեթէ անձանաչելի էին դարձել։

Այս ընդհանուր այլակերպութեան մէջ նկատելի էր նաև մի ներքին փոփոխութիւն։ Ընդհանրապէս համր ու պրկւած մի վիճակ էր ծութեան ժամանակը անցել էր եւ ով ինչ մտքի վրա մնացել էր, այնու էլ կանգ էր առել։ Դէպէքը մտքի հնարաւորութիւններից առետակցութիւնը։ մօտենում էր դէպէքերի վճռական ժամը, կարաւանի վայրի վայրկեանի մեծութեան գիշարժման վայրկեանը։ Զախալին իբրեւ «ժամանակաւոր» աքսորաթարմ անցեալից, այնքան մօտ այդ կայանի կեանքը դադարում էր փնտացումը, թշւառութիւնը անխուսափելի էր։ Զանբութեան այս ապրումների մէջ թերեւս որոշ բացառութիւն էին կազմում փոքրիկնե-

ըլ, որոնց համար «Խնդիրը» ժամանցի, հետաքրքիր արկածի բնոյթ
էր ստացել. . .

Դրսում աճող իրավանցումից երեսում էր, որ չուտով պիտի
մեկնինք: Դրա հետ միասին ներսում տիրող յոդնաբեկ անդորրու-
թիւնը քէչ-քէչ խախտում էր: Ամենից շատ աղմկում էին փոքրիկ-
ներ ունեցող մայրերը: Սրանց անհրաժեշտ էր, որ երեխաները իրենց
մօտ կանգնեն, այնինչ նրանք, առաջի յարմար առիթով, զնում էին
այս կամ այն ուրիշ խմբի մօտ: Միաժամանակ մարդիկ հետ ի հետ,
քակում ու նորից կապում էին իրենց իրերը. ոմանք մեծ կապոցները
վերածում էին փոքրերի, որ շալակն առնեն. ոմանք էլ առանձին կը-
տորներից կազմում էին կապոց, որ ճամբին չկորչեն . . .

Որքան յիշում եմ, անձնական որ եւ է հոգս չունէի ես: Ոսողլա-
կան վիճակս այնպէս էր, որ բոլորի ճակատագիրը բաժանելու Փիզի-
քական հնարաւորութիւնն արդէն իսկ մեծ բարեբախտութիւն էր: Ե-
րեք տարւայ ընթացքում այնքան էի ընտելացել Սամսոնի հայու-
թեան, որ յետ մնալը, կամ նրանից բաժանելը մեծագոյն թշւա-
ռութիւնը պիտի լինէր ինձ համար: Մը հետ միասին, ուրիշներին
ինձնով «չվտանգելու» մի անմիտ նախազգացում, որ հալածում էր
ինձ դեռ Քաղաքապետարանում, այժմ սրել էր: Զգում էի որ Զա-
խալիկում իշխանութիւնների կողմից յատուկ հաշւի տակ առնւած եմ:
Եւ որովհետեւ թւում էր, թէ Ալթուննեանին ընկերակցելս արտաքնա-
պէս մեղմացնում է երկուսիս ուսուցչութեան հանդամանքը, որոշել
էի հակառակ Պարունակի իրենց ընկերանալու պնդումներին՝ մեկնել
Ալթուննեանների սալլով: Մօտիկների մէջ այս աննշան պարագան ար-
ժէք էր ստանում, որովհետեւ, կարծես թէ, դառնում էի Ալթուն-
եանների ընտանիքի անդամ եւ պէտք է բաժանէի յատկապէս նրանց
ճակատագիրը: Արդէն եղած հաւաքականութեան մասցրդները փո-
շիանում, վերջանում էին, ու ցըիւ համայնքը վերածւում էր ինք-
նամփոփի ընտանիքների:

անհաշիւ իրերից մնացած կապոցների մօտ՝ սպասում էի որ բարձւեն
ու տանենք . . .



Զախալիի երկար ու ձիգ հրապարակը վերէնվար բռնւած էր
սայլերով։ Ըստ երեւոյթին տեղահանւում էին բոլորը։ Մնում էր
միայն վարի քարւանսարայի հասարակութիւնը, որի համար սայլեր
չկային եւ պէտք է ճամբայ հանւէր մէկ երկու օր յետոյ։ Արդէն ե-
ղած սայլերը չէին գոհացնում այդ օրը դուրս հանւած հասարակու-
թեան, եւ մարդիկ տեղ-տեղ վազվում էին սայլ գոնելու համար։ Կա-
րաւանից յետ ընկնելը, առանց սայլի մնալը ահարեկել էր նրանց։
Փոլիսները գոռում, գոչում, հրում, ու շտապեցնում էին։ Կարծես,
թէ Զախալիին հրդեհելու վրա էր, կամ ենթարկում էր թշնամի ու-
ժերի գրաւման։ Մէջ ընդ մէջ, սայլից սայլ անցուղարձ էին անում
նոյն կասկածելի թուրքերը, պարապ պարկեր, պարաններ ուսերին։
Կիսամներկ, գաղանացած այս մարդկանց տեսքը ահ ու սարսափի էր
աղդում։ Սրանց յաջորդում էին սայլապանները, որոնք մեծ մասամբ
յիշեցնում էին մեզ քաղաքապետարանից բերողներին։ Նրանք առանց
քաշւելու, չօշափում էին սայլերի մէջ եղած կապոցները, դիտում
զննում էին իրենց վիճակած «ճամբորդներին», գոռում գոչիւններով
կանչում էին միմեանց, ոէմֆոլ, ձեռքով, արտայայտում էին իրենց
զբաղեցնող մտքերը, հռուալով ցրւում էին, մի այլ տեղ նորից խըմ-
բըւելու համար։ Բայց կային նաեւ տարիքոտ, հանդարտ մարդիկ։
Այդպիսիներից մէկն էր Ալթունեանների սայլապանը, որը ձիերի
մօտ կանգնած անտարբերութեամբ ծխում էր իր չիբուխը։

Արեւն իր թեք ճառագայթները արդէն տարածել էր Զախալիի
վրա, երբ կարաւանը շարժւեց։ Անկարելի է նկարագրել ճամբայ ել-
նող անհաշիւ սայլերի հրմշտուքը, կառապանների իրար ուղղած հայ-
ուանքները, զեծեալ ոստիկանների խոպոտ գոչերը, ձիերի մէջըին
իջնող մարակների շառացիւնը։ Սայլերը քշում էին խմբերով, եւ ա-
մեն մարդ ուզում էր միւսից առաջ ճամբու վրա տեղ բռնել։ Բաւա-
րով նրանք կարգի ընկան եւ ծշտելով իրենց տեղերը կազմեցին մի
վերջը կորչում էր յետ ընկած տարածութիւնների մէջ . . .

Սայլերից շատ առաջ, բաց ու տարածուն դաշտի վրա նշմար-
ւում էին զանգւածներ։ Նրանք, կարծես թէ, առաջ չէին շարժւում,
այլ մի տեղ տարածւած, խմբում, ցրւում, նորից հաւաքւում, զատ-
ւում, նորից իմանում էին։ Որքան մօտենում էինք, այնքան խմբերը



ՍԱՄՍՈՆԻ ԴՊՐՈՑԻ ՆԻՍԳԱԽՈՒՄԲԸ

Շշմած այդ տեսարանից, դարձայ գարեգինին և առաջարկեցի
որ մեզ մօտ առնենք փոքրիկը:

— Մեզնից չի կախւած, դառնութեամբ պատասխանեց նա ու ան-
գանու:

Վերջապահությունների թափորի ծայրին հասանք. առջեւեց

յամբաքայլ գնում էր մի հեծեալ ոստիկան, որ կարծես թէ քնած էր . . .

* *

Հասնելով դիմացի վերեւի ծայրին, մենք վար սահեցինք առջեւից ընթացող սայլերի յետեւից: Աջ եւ ձախ կողմերից երբեմն յայտնում էին խրոխտութեամբ արշաւող ոստիկանները, որոնք մերթ յետ ու մերթ առաջ էին ընկնում: Սայլերի զդթան ծուռում էր, թեքում, օճի պէս ծալլելով, ապա կրկին շտկւում էր ու ճարահատեալ շարունակում էր առաջ գնալ: Մէկ-երկու վայրկեան եւս՝ եւ ահա խախտեց կարգն ու կանոնը. սայլապանները մըցման մէջ մտան: Եւ բազմաթիւ սուլոցներ, ոռնոց ու դղբղոց, շակալոցներ ու հարահրոցներ իրար անցած՝ մեր շուշը ստեղծեցին դժոխային մի տակնուվայութիւն: Մեր յամբ ու հանդարս սայլապանը նոյնալէս համակել էր ընդհանուր տրամադրութեամբ: Ով դիտէ, գուցէ հին սայլապանի հպարտութիւնն էր խօսում նրա մէջ: Սայլսայլի յետեւից՝ նա յաղթահարում էր միւսներին ու առաջ անցնում: Մեր առջեւից այժմ ընթանում էր կոյսերի սայլը: Թւաց, թէ պիտի անցնիք եւ նրանց, բայց ճանապարհը գնալով սեղմւեց եւ մենք մնացինք այդ սայլի յետեւին փակած: Կոյսերից գեռատին նստած էր դէպի առաջ եւ ինչոր իրարանցման մէջ էր: Նա ձեռքերով ծածկել էր դէմքը եւ նստած տեղը ճօճուում էր: Տարիքոտ կոյսը թեքւել էր դէպի սայլապանը եւ նրա հետ ընդհարման մէջ էր: Յանկարծ գեռատին վար առաւ դէմքից ձեռքերը եւ մի սուր ճիչ արձակեց: Ես նստած տեղից վեր ելայ ու տեսայ . . . սայլապանը մտրակում էր ձիերը, եւ, քովնտի յետ պառկելով, ընկնում էր դեռատի կոյսի ծնկերին: Միւսը ուզում էր իր ընկերուհուն յետ քաշել, բայց սայլապանը, վերջինի զիստերը գրկած, քաշում էր դէպի իրեն . . . Նոյն այդ պահին սայլերը փախչում էին կատաղութեամբ եւ թւաց, թէ կոյսերի սայլը ճամբու եղին պիտի շրջի: Սակայն կառապանը յանկարծ շտկւեց եւ, ձիերը թեքելով հակառակ ուղղութեամբ սանձեց: Ճանապարհը այդ մասում բաւականաշափ նեղ էր եւ այնքան բարձր էր դաշտից, որ հարկադրւեց կանգ առնել նաեւ մեր սայլապանը: Իսկ մեր յետեւից իրարու զարնեւելով կանգ առան նաեւ մըց նացած սայլերը: Այդ իսենթ վազքի մէջ սայլերի մի խումբ, շարքից պոկւած, դեռ ընթանում էր առջեւում, բայց քիչ վերը կանգ առին նաեւ նրանք: Սոսկալի իրարանցում սկսեց: Ամէն տեղից աղաղակ-ներ լսւեցին: Անտեղեակ դէպի պատճառին ու ինդրին, հասարակութիւնը կորցրել էր իրեն: Միաժամանակ կառապանները հայրո-

յում էին միմեանց : Մի քանի հոգի քաշքում էին կոյսերի դաճան
սայլապանին , երբ վրա հասան պահակները : Տարիքոտ կոյսը սայ-
լից իջել էր եւ լալով պատմում էր դէպքը պահակներից մէկին .
միւսը սայլի մէջ դէմքով ընկել էր դիմացը եղած կապոցի վրա եւ
անձայն ցնցուում էր : Երկար չտեւեց խնդիրը . ոստիկանը խիստ ըս-
պառնալիքներով վար տարաւ դաճան սայլապանին ու մի ուրիշն
բնբերով՝ կոյսերի սայլը յանձնեց նրան . . .

Արեւը փայլում էր ուղղահայեաց, երբ դանդաղութեամբ սկըս-
սեցինք քերել սարերի լանջերը: Մօտենում էինք կաւախին: Դեռ
ընդամէնը երկու օր առաջ ամէն մի սամսոնցու համար այս գաւա-
ռական քաղաքի հետ կապւած էին հազար ու մի ակնկալութիւններ.
ոմանց թւում էր, թէ այստեղ պիտի մնան. ոմանք յոյսեր էին կա-
պում «Հայասէր» Բեքիր-իհաշայի հետ, որը այժմ այստեղ էր, իր
ծննդավայրում. ոմանք էլ մթերքի, հանգստի, ինչ որ անստոյդ
միջնորդութիւնների հաշիւններ էին անում: Սակայն առաւօտից ար-
դէն պարզ էր, որ բայոր ակնկալութիւնները օդն են ցնդել:

Հազիւ տասը հազար շունչ կազմող այս գաւառական քաղաքի
բնակչութիւնը բաղկացած էր բացառապէս թուրքերից։ Կային շատ
քիչ թւով յոյներ։ Խորտուրուր, փոշոս փողոցի երկու ուղղու-
թեամբ նստած ու կանգնած էին անհաշիւ թուրքեր։ Լուռ, անկա-
րեկից, բայց եւ առանց թշնամանքի, նրանք դիտում էին անցնող
սայլերը։ Մի ներկայանալիք շէնքի դիմաց, աթոռների վրա, նստած
էին մի քանի մարդիկ։ Նրանցից ոմանք սուրճ էն խմում, նշանա-
կում է, սրճարան էր։ Մի քիչ անդին, դէպի վար երկարում էր մի-
նարէն։ Աջ, ձախ հողածածկ տանիքների վրա կանգնած էին կա-
նայք, աղջիկներ, անինամ պարուրած չարչափների մէջ։ Կիսա-
մերկ թուրք փոքրիկներ, սայլերին ընկերացած, անհանդարտ ու
աննպատակ, վաղվզում էին։ Ընդհանրապէս մեր առջեւ պարզող
տեսարանները, կարծես թէ, մեզ նորից վերադարձնում էր կեան-
քին։ Սակայն վերջացաւ . . . :

Քին : Սակայն վերջացաւ
Սարի լանջից սահելով իջնում էինք անդադար : Մէջ ընդ մէջ
պարզում էին չորացած, դեղնած մարգագետիններ : Դիմացը,
չեռում երեւում էին կարատաղի լեռները : Այնքան արագ վար ի-
ջանք, որ հազիւ մէկ ժամ էր անցել, երբ հասանք լեռների ստորոտ-
ները : Քիչ յետոյ սայլերը կանգ առին . ոտքով պէտք էր անցնէինք
լեռները : Եւ այստեղ պարզէց մի սրտաշարժ տեսարան, որ դժւար
է մոռանալ : Վերջին մի շաբաթայ ընթացքում, տարրեր քարւան-
սարանների մէջ արգելափակւած ազգականներն ու բարեկամները նո-
րից գտնում էին իրար : Կանայք լալով փաթաթւում, հարցուփորձ

էին անում միմեանց եւ այնպիսի մի ձեռով էին պատմում իրենց քաշածների մասին, որ կարծես, թէ մեծագոյն թշւառութիւնը արդէն անցել էր . . .

Ինձ համար բոլորովին աննկատելի կերպով առաջ անցայ: Հակառակ վրաս եկած թուլութեան, թւում էր, թէ անվերջ կարող եմ քայլել: Հազար ու մի հին ու նոր վերյիշումներ անցնում, դառնում էին գլախ մէջ . . . Վերը սարի գագաթին կանգնած էին երկու հեծեալ ոստիկաններ: Արեւի ճապայիթները խաղում էին նըրանց թեւերից կախւած հրացանների վողերին: Լերկ լեռները տեղտեղ ծածկւած էին մաշտաներով, թփերով: Այստեղ այնտեղ երեւում էին, որպէս հրդեհից զերծ մնացած, մենակեաց ծառեր: Ճանապարհ գնալով շրջում էր: Աւելի վերը, երկու լեռնագագաթներ ճանապարհի լայնութեամբ, միացւած էին տախտակէ հասարակ կամուրջով: Քովնոտի մի նեղ ու անբանուկ արահետ տանում էր դէպի մի անմարդաբնակ չչնք, որը երեւի լքւած հանգստակայան էր: Լեռներից հոսող հեղեղատները, ժամանակի ընթացքում, փորել, փորփել էին լեռնագագաթների լանջերը ու ճամբայ էին բացել: Կիրճն այնքան խորն էր, որ ներքեւի վճիտ վտակը նման էր վար ընկած պսպղուն գօտու: Տեղ-տեղ վտակը պատսպարւել էր գունաթափ եղած մաշտաների տակ: Կամուրջի աջ կողմից, վերէն-վար, բացւած էր 6-7 մետրի լայնութեամբ մի անդունդ: Ուղիղ վար, մի սալ քար, խճաքարերով պարուրած, կազմել էր բլրակ: Անբացատրելի ազդեցութիւն ունէր այդ անդունդը վրաս: Գամւած մնացել էի կանգնած տեղս: կարծես, թէ ինձ յուղով բոլոր հարցերի լուծումը այստեղ էր: Որքան մնացի կանգնած, չգիտեմ ու, յանկարծ, սարսուսի մի ուժգին հարւած ցնցեց ինձ, ծնկներս ընդարձացան . . . Յետ քաշւեցի ու անցայ, բայց ուժերս արդէն հատել էին: սիրտս բաբախում էր, ոտքերս առաջ չէին գնում: Կամուրջից դուրս, մի քանի քայլ անդին նստեցի: Վարը ցրւած հասարակութիւնը, սարի լանջն ի վեր, կարծես թէ չորեքթաթ էր տալիս . . .

Դիմացի ոլորտի ծայրից, անսպասելի կերպով; զուրս ընկաւ Տիգրանը: Կարմրած, զւարթացած ու բոլորովին փոխւած փոքրիկը ինձ զարմանք պատճառեց: Ուշն ու միտքը վրաս էր. կամուրջն անդամ չնկատեց. չնչայեղձ էր եղել:

— Ահա՞ , թէ ուր էք . . . եէք, երթանք, հասնինք գագա-թին . . . Յոդնեցա՞ք . . . կը նայիմ հոս, կը նայիմ հոն՝ չկաք. . . որչափ վախցայ . . . Աղբարիկը ըսաւ, թէ վախ չկայ . . .

— Աղբարիկը գիտէ՞ , որ եկար, Տիգրան:

— Գիտէ՞ , գիտէ , ինծի ըսաւ, թէ հոս էք, արտօնեց , որ գամ . . .

0', ինչ բարձր է հոս . . . Միւսիւ Վահան, թոռամանը կը լիշէ՞ք. կը լիշէ՞ք կարա-Սամսոնի է՛ն բարձր բլուրը, որ վաղէվազ կելնէ-ինք ու գլտորւելով կիջնէինք . . .

Տիգրանը բոլորովին մոռացել էր, թէ ուր ենք, բայց պատաս-խան չստանալով լրջացաւ ու լոեց :

Հասարակութեան առաջին խմբերը մօտենում էին ոլորտին : Նը-րանցից վար մարդ, կին, ծեր, երիտասարդ մագլցում էին դեռ : Ա-միվ վար սայլերը կիսակլոր պատի պէս երերում էին :

Տիգրանի խոնաւ թաթիկն առի բոլու մէջ, բայց ինչ ասելու չե-մացայ :

— Միւսիւ Վահան, կրնամ հարցնել, թէ մինչեւ ո՞ւր պիտի եր-թանք :

— Մինչեւ . . . Մալաթիա :

— Աղբարիկը կըսէ՝ մինչեւ կաւզա :

— Մալաթիան վերջին կէտն է . . .

Տիգրանի վերջին հարցումը եղաւ այդ. նա սեւեռաբիր դիտում էր ստորեւ տարածւած անդունդը :

**

Մարդիկ սկսեցին հասնել մեզ : Նրանք մի պահ կանդ էին առ-նում կամուրջի վրա և շւար հայեցքով վեր-վար նայելով՝ չնչում էին բերանաբաց ու ապա քրտնաթոր շարունակում էին գնալ : Ինքն էին ճանապարհը — այս էր, կարծես թէ, աշխարհի եւ իր գոյութեան խորհուրդը :

Վերելքի ծայրին ճանապարհը ոլորապոյոյ թեքում էր դէպի հարաւ : Ելանք սարի գագաթը : Մեր առջեւ բացեց մի քարավէժ հարաւ : Ենանակաշտ : Հասնող մարդիկ չնչասպառ տեղ էին բռնում այստեղ : Մատքերով անցել էի մեր յետեւը մնացած ոտաւորներին՝ մօրը, ման- չուկին, նրանց մէջ եղած ոտարոպիկ փոքրերին . . . Տիգրանը չուկին, նրանց մէջ եղած ոտարոպիկ փոքրերին յայտնող խմբերը . լուռ, մտազբազ եւ ուշադիր դիտում էր վարը յայտնող խմբերը . երեւի փնտում էր իւրայիններին : Երբ մեզ մօտեցաւ Պարունակը, յարմար առիթով ինդրեցի, որ այլեւս չթողնի, որ Տիգրանը ինձ գայ: Վերջապէս հասան նաեւ սայլերը ու շարքով տեղ բռնե-մօտ գայ: Կոյսերը, Ալթունեանները, ցին ճանապարհի երկայնութեամբ: Կոյսերը, Ալթունեանները, միւսների նման, հասան իրենց սայլերի հետ միասին: Յուսահատա-միւսների նման, հասան իրենց սայլերի հետ միասին: Յուսահատա-միւսների նման, հասան իրենց սայլերի հետ միասին:

քայլի նման էր՝ բեկրեկող, երերում, վախով համակւած։ Գլուխը, դէմքը, խսպառ անհետացել էին վար քաշած ճերմակ գլխածածկի թեւերի մէջ։ Ահա եւ գաճաճը, որ կատաղութեամբ նայում է կոյս սերին չորս կողմը դարձող սայլապաններին։

Քրանաթոր ձեերը գեռ թափահարում էին իրենց բաշերը, երբ կարգադրեցին, որ նստենք սայլերը։ Շրջապատը կարծես թէ այրւած էր լաւայով։ Միայն ճանապարհի աջ կողմից՝ ուր կերճը քիչ քիչ նօսրանում ու տարածւում էր, ձորակներ ու բլուրներ կազմելով։ Երեւում էին բարձրադիր թփեր, մացաններ, որոնք մատնում էին ժամանակին և լած խիտ անտառի հետքերը։

Մտանք քարքարուտների մէջ։ Զիերը քաշում-տանում էին սայլերը անասելի դպրովինով։ Անտանելի տօթ էր եւ թանձր փոշին պարուրել էր մեզ։ Գիշերայ անձրեւը կամ այստեղ չէր հասել, կամ կիզիչ արեւը վաղուց արդէն ծծել քաշել էր վերջին կաթիւը։ Տիկին և էրեկան յոգնութիւնից նիրհում, սայլի մէջ տարուբերւում էր։ Գարեգինը թաղւած էր մաքերի մէջ։ Առջեւի սայլում կոյսերի ճերժակ գլխածածկերը սայլի ցնցումներից ծածանուում էին, զարնուում սագերի թեւերի նման։ Ո՞վքեր են արդեօք։ Ազգականներ, պաշտօնակիցներ, քոյրե՞ր, թէ պարզապէս բախտակիցներ։ Ինչո՞ւ մենակ են, ինչո՞ւ չեն մնացել յունաց թաղում։ Ո՞վ պիտի կարողանայ հասկանալ նրանց հայ լինելլ . . . Եւ միտքերս նորից թռչում էին գէպի Սամսոն, գէպի Կարա-Սամսոնի այն զւարթ առաւօտը, երբ առաջին անգամ տեսայ նրանց . . .

Հեռւում, լեռնադաշտի միապաղազ տարածութեան խորքում, նշմարւում էր մի կոյս։ Հինութիւն էր։ Քանի մօտենում էինք նրան, այնքան քարքարուտներին յաջորդում էին մարզագետիններ, որոնք իրենց կանանչերով նման էին անապատային օվասիսների։ Բացի կոյսերից, որոնց համար այլեւս ամեն ինչ դադարել էր գոյութիւն ունենալուց, ամեն մարդ ցցւած դիտում էր այդ չէնքը։ Շատ ժամանակ չանցաւ եւ մօտեցանք ու կանգ առինք։ Գտնուում էինք մի պահականոցի առջեւ, որից քիչ հեռու կանգ առաւ եւ մեր սայլը։ Քառակուսի շէնքը բաւական ընդարձակ տեղ էր բռնում։ Շէնքի աջ կողմում, մեր սայլի դիմաց տարածւում էր մի ընդարձակ դաշտ։ Զախ կողմից, վերը կար ջրհոր, որի շուրջը խմբւել էին սայլապաններ։ Դէմը, լայն պատշգամբի երկարութեամբ, գետնի վրա հասկանանած էին բարձրադիր թափանք (նառեր), որոնց մօտ նստած, ւական թւով կասկածելի թուրքեր, որոնցից շատերը զինւած էին բատրճանակներով ու սրերով։ Բատ երեւոյթին, չէթաներ էին։ Նը-

րանք անցնում էին սայլերի շարքը: Մարդ չկար, որ կանգ չտրներ
կոյսերի սայլի մօտ. ի՞նչ անմտութիւն էր այս խեղձերի համար ի-
րենց հագուստներով ճամբայ ենելլ եւ ինչպէս Զախալլիում չէին
նկատել տարագրւող կանանց կերպարանափոխութիւնը . . . Բարե-
բախտաբար որ եւ է դէպքի նախանշան չկար: Լստ երեւոյթին, վայ-
րի «պաշտօնական» հանդամանքը զայռում էր մարդկանց: Եւ տարա-
գերները, քիչ-քիչ սրտապնդելով, իջնում էին սայլերից եւ ապա՝
աւելի համարձակութիւն ստանալով՝ զնում, գալիս էին մինչեւ ջր-
հորը: Կանգնած էի ձիերի մօտ, որոնք դլուխները քաշ, ականջները
կախ, յոգնած ու մարդու պէս մտավրադ՝ նայում էին դէպի դաշտ:
Սայլապանը մօտեցաւ նրանց՝ ջրով լի դոյլը ձեռքին: Ձիերը ցամքե-
ցրին դոյլը եւ դուրս հանելով դունչերը սկսեցին կրծտոցով ծամել,
ծամծմել շուրթերից ծորացող կաթիլները: Կոյսերի սայլի մօտ
կանգնած էին մի քանի մարդիկ, որոնց մէջ էր նաեւ կաթոլիկ տէր
հայրը: Վերջինը տաքացած ինչոր բան էր ասում տարիքուո կոյսին:
Դեռատին, որ նախապէս հետաքրքրութեամբ լսում էր, յանկարծ յետ
քաշեց իր ընկերուհուն, որը առանց այն էլ բացասաբար թօթւում էր
տից: Կաթոլիկ հայրը դժկամակութեամբ հեռացաւ կոյսերի մօ-
գլուխը: Հետաքրքրութիւնը: Մի քանի քայլ յետ, նրանց
ուղեկցում էին եօթ-ութ սամսոնցիներ, միմեանց հետ խորհրդաւոր
փախալով: Հետաքրքրութիւնը յաղթող հանդիսացաւ իմ մէջ ու նը-
րանց յետեւից մէկ-երկու քայլ արի՝ խնդիրը համկանալու համար:
Պատշգամբի թախտի ծայրին ցից նստած էր մի գէր ոստիկան, որի
գէմքից երեւում էր, որ խիստ նեղուում էր տօթից: Նա վար առա-
փէսը, մէջը գէցեց ու նորից գրաւ դլիսին, պիշպիշ նայելով մօտե-
ցողներին: Լստ երեւոյթին սա էր պահակատան պետը, որին մօտե-
ցաւ կաթոլիկ հայրը եւ ասաց:

— Բէյ էֆէնտի, խնդիր ունեմ ձեզ՝ իմ եւ սրանց

Նա զոլց տւեց իր յետեւը կանդնած ընկերներին:

— Ի՞նչ կայ, հարց տւեց ոստիկանը, վիզը օճիքը կմը հասլու
շարժում անելով :

— Մենք կաթոլիկներ ենք եւ հնթակայ ենք Հռոմին: Սեղ ասա-
ցին, թէ մինչեւ մեր հարցը օտարահպատակների կարգով պարզելը,
պէտք է մեկնենք Կաւախ, որտեղից մեզ շուտով կը վերադարձնեն
Սամասն . . .

— Վերջը, ասելիքդ ի՞նչ է, անհամբերութեասք ըստյամց սը-
րան սստիկանոր:

— Դեռ կաւախ չհասած դիմեցի մեզ ուղեկցող պահապը պատրի,
բայց մեռ սալլոր կանդ չառաւ ...

— է' . . . է' :

— Մեղ բերին մինչեւ այստեղ ու չգիտենք, թէ ուր են տանում . . .

— Միտք ի՞նչ է, փափա՛զ:

— Հիմա խնդրում ենք, որ մեղ յետ ճամբէք կաւախ, մինչեւ մեր հարցը պարզէի, որովհետեւ մենք կաթոլիկ ենք եւ, ինչպէս արդէն ասացի . . .

— Կաթոլիկ լինելնիդ հասկացանք, ի՞նչ միլլէք էք, այն ասս: Լոռութիւն տիրեց: Տէր-հայրը կարկամած նայում էր . . .

— է' . . . է' :

Պարզ էր, որ չի ուզում պատասխանել:

— Հա՞յ էք, թէ չէ' . . .

— Հա՞յ ենք, յանկարծ գոչեց տէր-հայրը:

— Դէ՛ որ հայ էք, հայտէ՛ . . . բոլոր ուժով գոռաց ոստիկանը:

Տէր-հայրը մի պահ կանգնած մնաց. աչքերից կրակ էր թափւում, շրթունքները դողում էին: Ապա յանկարծ նա դարձաւ եւ արագ քայլերով անհետացաւ բլուրից դէպի վար: Իւրայինները ցըւեցին: Լուսաւորչական հայերից ոմանք միմեանց աչք թարթեցին, ժպտացին:

* *

Պահակատանը մօտ երկու ժամից աւելի մնացինք: Ասում էին, թէ սայլապաններն ու ձիերը պէտք է հանգիստ առնեն: Սակայն ձըդ-ձըդումները գնալով մտահողիչ էին դառնում. մարդիկ վախենում էին, որ գիշերը կարող են մեղ այդտեղ պահել. դիմացի անյայտութիւնը ներկայի համեմատութեամբ աւելի տանելի էր թւում:

Արեւն արդէն բաւական թեքել էր, երբ հրաման տւին շարժւելու: Պահակատնից անվտանգ ճամբայ ենելը բոլորի վրայ բարերար ազդեցութիւն թողեց: Գոյութիւն պահելու ինչոր աղօտ յոյսեր էին ծայր տւած համատարած թշւառութիւնը, իսկ այդ գէպքում ինչ լինելն ու ըլինելն անստոյդ էր, անորոշ եւ դրա համար էլ յուսատու: Միւս կողմից կասկած չէր մնում, որ մեղ վար են դնելու կաւզայում, ուր, իբր թէ, սպասում էին նոր կարգադրութեան մի օր առաջ Զամլից մեկնած տարագիրները . . .

Զիերը, քիչ-շատ կազդուրեկելով, գնում էին աշխուժով, գլխի վրա կոնածեւ դարձնելով ականջները: Ճանապարհը շարունակ իջնում էր: Աջ կողմից այժմ երկարում էին տարածուն եւ խիտ մացար-

ներ : Զախ կողմից՝ քարքարուտներին յաջորդում էին մարգեր, դաշտեր, հովիտներ : Մօտենում էինք Կաւզային :

Կաւզա քաղաքը մեծ չէ, բայց յայտնի է իր հանքային ջրերով : Սամսոնցիներից ունեւորները ամրան ամիսներին գալիս էին այստեղ օդափոխութեան, բուժւելու : Այժմ տարագիր հայութեան կարաւանը կանդ էր առել այդ քաղաքի առաջ, իսկ տեղական իշխանութիւնները հրաժարում էին ներս առնել, իբր թէ, տարափոխիկ հիւանները կանդ առաջ քաղաքի առաջ, իսկ տեղական իշխանութիւններից վախենալու պատճառով . . . Որքան մնացինք այդդութիւններից վախենալու պատճառով . . . Որքան մնացինք արտեղ կանդ առաջ՝ չեմ յիշում : Գիտեմ միայն, որ արեւը վաղուց արդէն մայր էր մտել : Կաւզայի ոստիկանութիւնը անընդհատ գնում դալիս էր, շարքով կանդնած սայլերի բովանդակ երկարութեամբ : Երբեմն յայտնուում էին բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք կանդ էին առնում այս կամ այն սայլի մօտ եւ հարցումներ ուղղում աքսունիներին : Ենթադրում էր, թէ այդ անցուղարձը ի զուր չէ . երականներին : Ենթադրում էր, թէ այդ անցուղարձը ի զուր է . երեւի ուղղում էին համոզել, որ մարդիկ միայն հիւծւած, լքւած են ու քաղաքում ընդունելու համար «վարակիչ հիանդութիւններից» վախ չկայ . . .

Այդ նոյն ժամին, ճանապարհից դուրս, դաշտի վրա, մեր առջեւ պարզեց մի անսովոր տեսարան . քաղաքից իջել էր մի թափոր, ջրի առջեւից գնում էր մի փոլիս . չորս ուրիշ մարդիկ, պատգարարակի վրա դրած, տանում էին սաւանով ծածկւած մի դիակ : Անշուք յուղարկաւորութեան թափորը կազմում էին նշան էֆ . Զատրճեանի մեծ որդին եւ կինը : Նշան էֆ . մեռել էր . . . Տեղահանութիւնից ի վեր Սամսոնից ցրիւ համայնքի կեսնքում առաջին մահն էր այս : Ի վեր Սամսոնից ցրիւ համայնքի կեսնքում առաջին մահն էր այս : Համայնքի բնական նահապետը մեռել էր եւ թաղման պատի էր արշամայնքի բնական նահապետը մեռել էր եւ թաղման պատի էր արշամայնքի բնական նահապետը մեռել էր եւ թուրքերի մէջ ամեն տեղ ժանացել՝ իր մեծ մարդասիրութեան եւ թուրքերի մէջ ամեն տեղ ժանացել՝ իր անհաչիւ բարեկամների շնորհիւ . . . Նախախնամուռնեցած իր անհաչիւ բարեկամների շնորհիւ . . . Աներեթիւնը ցանկացել էր, որ հայ համայնքի սոււրապոյն մասը, աներեթիւնը ցանկացել էր, որ հայ համայնքի սոււրապոյն անդամի թաղման ւակայելի մի ձեւով, ներկայ լինի իր աւագագոյն անդամի թաղման անշուք թափորին : Արդար էր : Եւ սայլից-սայլ մարդիկ վար էին անշուք թափորին : Արդար էր : Եւ սայլից-սայլ մարդիկ վար էին առնում ֆէսերը, կանդնում, ծունկ չոքում, մինչեւ որ անցնում էր առնում ֆէսերը, կանդնում, ծունկ չոքում, մինչեւ որ անցնում էր առնում ֆէսերը, կանդնում, ծունկ չոքում, մարդկանց համը ու սեթափորը : Սայլերի երկար շարքի մէջ եղած մարդկանց համը ու սեթափորը : Սայլերի երկար շարքի մէջ եղած մարդկանց համը ու սեթափորը : Սայլերի երկար շարքի մէջ եղած մարդկանց համը ու սեթափորը : Սայլերի երկար շարքի մէջ եղած մարդկանց համը ու սեթափորը :

Յուղարկաւորութեան թափորը վաղուց անհետացել էր, երբ յանկարծ ինձ մտքերից սթափեցրեց Գարեգինը որ լայն ժամար գէմքին աճապարանքով ասաց .

— Նայի՛ր, նայի՛ր, տես ինչպէս է կոտրտւում . . .

Հոգեկան որոշ պայմաններում, մարդու բնութեան երեւի յատուկ են այնպիսի անդիտակից ընդվզումներ, որոնց համար բացատրութիւն չկայ:

Գարեգինը մատնանշում էր մի շքեղ, բարձրաստիճան պաշտօնեալի վրա, որ վերադառնում էր յետեւի սայլերից, մի ոստիկանի ուղեկցութեամբ:

Այժմ, երբ զրում եմ այս տողերը, հասկանում եմ Գարեգիի միշտ լուրջ բնաւորութեան յատուկ մանկական այդ դիտողութեան անմեղութիւնը: Բայց այն ժամանակ սարսափելի վախ զգացի եւ, հազիւ զսպւած ցասումով, բոթեցի Գարեգինին: Դժբախտաբար, արդէն ուշ էր. ճիշդ նոյն վայրկեանին, պաշտօնեան յետ նայեց, մի ակնթարթ կանդ առաւ, աչքերը թարթելով մեղ դիտեց ու գնաց: Զգացի, որ լաւ չեղաւ: Նոյնը զգաց երեւի նաեւ Գարեգինը, որը մէկէնիմէկ սմքեց ու կծկւեց սայլի մէջ . . .



Առջեւի սայլերը շարժւեցին: Ոչ ոք չդիտէր, թէ ուր են տանում մեղ: Անցնում էինք քաղաքի ծայրամասով, լայն, փոշոտ մի փողոցով: Հաղարաւոր ամբոխը բռնել էր փողոցի երկու կողմերը այնպէս իրաւ, որ միայն մի նեղ շերտ էր մնացել սայլերի անցքի համար: Ամբոխը դիտում էր մեղ այնպիսի թշնամական ու վրէժինդիր ձեւով, որ զարհուրելի եւ միաժամանակ անհասկանալի էր մեղ համար: Երբեմն թուում էր, թէ այս կամ այն թուրքը ուզում է ձեռքը մեկնել, վար քաշել ինձ սայլից եւ տեղն ու տեղը սպառել. երբեմն էլ այնքան շատ սպառնալից դէմքեր էին անցնում-զառնում բիրերիս մէջ, որ գլուխս պտտում էր: Յաւիտենականութեան չափ երկար թւաց ինձ մեր արտերթը կաւզայի հասարակութեան միջով: Վերջապէս անցանք. անտանելի ժխորն ու իրարանցումը մնաց մեր յետեւում: Առաջ էինք գնում այն փոշոտ փողոցով, որն այժմ ամայի տարածութեան նման էր: Բախոն էր բշում մեղ, ճակատաղիրը. ամեն բան ալլեւու պարդ:

Շրջակայքի մարդագետինները մթնչաղի տակ սեւ գոյն էին ըստացել: Հասանք եւ անցանք ինչոր կիսաւեր վայրի միջով: Այստեղ, այնտեղ երեւում էին քարուքանդ եղած խրճիթներ, մարագներ, աշխոներ, բայց կենդանի չունչ չկար: Կառապանները անձայն, անաղմուկ աճապարում էին: Ընդհանրապէս նրանք դեռ կաւզայի տակ մի տեսակ զսպւել, լրջացել էին: Զիերը գնում էին համաչափ վաղքով:- «Թըռ'ո՞ո՞ո՞ո՞» . . .

Անհաշիւ սայլերի դղրդիւնը կիսախաւարի մէջ նման էր տարածուն որոտի : Հարիւրաւոր ձիերի զովիւնները, բեկրեկւող համաշափութեամբ, տարածւում էին մթութեան գրկում նիրհի մտած բնութեան մէջ : «ՄԵ՛Կ, երկու, երեք - մԵ՛Կ, երկու, երեք, - մԵ՛Կ, երկու, երեք» . . . կարծես, թէ ձիերը երեք ոտք ունեն :

Թէւ յոյս չունէի պատասխան ստանալու, բայց գարձայ մեր համբ սայլապանին հարցումով, թէ ուր պէտք է իջեւանենք :

— էլէւիում, կարճ պատասխանեց նա:

«Էլէւի» . . . Օ՛, ինչպէս չէ, յիշում եմ Յիշում եմ կենսուրախ Հայր Խրիմեանի շատ պատմութիւններից մէկը, որ անում էր նա մեղ ձմրան երկար գիշերներին, իր տաքուկ, կոկիկ հիւրասրահում, անվերջ լեցնելով ու պարպել տալով հիւրերին կլոր սեղանի շուրջը շարւած ողիի բաժակները : —

«Հակառակ ուղղութեամբ երկու տարբեր վայրեր կան. մէկը կոչում է Ալէւի, միւսը՝ էլէւի : Երկուսն էլ թէւ ալէփով են գրւում, բայց առաջին դէպքում ալիփը պահանջում է յատուկ նշան : Պաշտօն-բան, որ պէտք է «քէզկէրէ» տայ ճամբորդին Ալէւի գնալու համար, զանց է առնում նշանը եւ մարդուն բոնութեամբ բերում հասցնում են ելէւի» . . .

Այժմ այստեղ էինք զնում նաև մենք, բայց թէ ուր էր ուղղած մեր «քէզկէրէն» յայտնի չէր . . .

Մութն արդէն այնքան էր թանձրացել, որ ճանապարհը այլեւս աննշմարելի էր եւ միայն սայլերի շարժումներից կարելի էր հասկանած արելիք, որ թեքեցինք, անցանք, իջանք, բարձրացանք, եւ այլն : Դղբր-դոցի միջից, մերթ ընդ մերթ, առջեւից լուսում ու փոխանցւում էին մարդու աշխարհը : «հա-հո՛ւ, հա-հո՛ւ, հա-հո՛ւ» . . .

Ընթացքը դանդաղելու աղդարարութիւններ էին : Աջ եւ ձախ, մթութեան մէջ թանձրանում էին կաւզայում կրկնապատկւած ձիաւոր պահակների սուերները : Ովքեր էին առջեւի եւ ովքեր յետեւի սայլերում նատածները, յայտնի չէր : Եւ արդէք չունէր, քանի որ սայլերու աշխարհը այլեւս իր սայլն էր . . .

Անյարս տարածութեան մէջ, դէպի ձախ, ձեռուում, վար ընկած աստղի պէս, յայտնուում ու չքանուում էր մի լոյս : Երբ դտնում էի, յանկարծ անհետանում էր . երբ նորից փնտուում էի, յայտնուում էր մի ուրիշ տեղ : Երեւի բաւական ժամանակ էր անցել, երբ լրյաց այլեւս մի տեղ կանգ առաւ : Անվերջ կրկնուող աղդարարութիւնների վրա, սայլերի բնթացքը իսպառ գտնդաղեց : Միաժամանակ յսւեց մի շանհաջոցը : Ապա յանկարծ փշրւող ճռոցով վար իջանք : Դղբդիւնը մա-

րեց եւ կարծես թէ անդունդն անցանք։ Անիւների խղզոցից հասկանում էինք, որ դաշտի մէջ ենք։ Աչ, ձախ, յետ, առաջ մթութեան մէջ թանձրանում էին բազմաթիւ սուերներ։ Կանգ առանք։



Էլէւին մի դաշտ է։ Համատարած խաւարի մէջ ուրիշ ոչինչ յայտնի չէր։ Կարգադրում են բեռները վար առնել։ Ամէն մարդ անխօս ենթարկում է։ Պարզում է, որ լուսաբացին սայլերը պէտք է յետ դառնան։ Եւ ամէն մարդ սայլապաններին վճարում է այնքան, որքան նրանք պահանջում են։ Տեղ բռնելը, գոյութեան նոր պայմանները հասկանալը այնքան հրատապ ու հրամայողական էր, որ բոլոր մնացած հարցերը արժէքագուրկ էին եղել։ Եւ դաշտը համակեւել էր երաշանցումով։ մարդիկ քաշըում էին իրերը, մի-մի կապոց առած վազվզում էին դէս ու դէն, յետ դառնում եւ յուղած կանչում միւսներին։ Այս իրարանցման միանում էին ձայները սայլապանների, որոնք դաշտն ի վար ճամբայ էին բացում, ձիերին հանդիստ տալու համար։ Միաժամանակ, դաշտի ընդարձակ տարածութեան վրա, իրարու յետեւեց յայտնում էին մոմի եւ թիթեղէ ճրագների բեկրեկող լոյսի լեզւակներ։ Մեր յետեւում, աղօտ լոյսերի տակ, նշմարւում էր մի շնչք, դէպի ուր ուղղուում էին շատերը։ Գարեգինն ու Տիերեկան մի-մի կապոց առած հետեւեցին նրանց։ Բայց շուտով յետ դարձան։ Պարզեց, որ շէնքը մի խարխլած քարւանսարայ է, որը արդէն լեցւած է մարդկանցով։ Տեղ բռնեցինք այդ շէնքի պատի տակ, ուր արդէն զաքուցրիւ տեղաւորւած էին ուրիշները։ Այդ գործի մէջ մեղ բաւականաչափ օդնեց Արմենակ Փէչէճեանը, որ վերջին դասարանի սաներից էր։ արդէն պատի տակ տեղ բռնելու հնարաւորութիւնն է, պարտական էինք նրան։ Փէչէճեաններից բացի, մեր անձինական հարեւաններից յիշում եմ նաեւ Հիւսիսեաններին՝ կնոջը, մանչին, աղջկան։ Կարապետ էֆէնտին, պատերազմի նախօրեակին, մեկնել էր Բաթում քեռարիս հետ, որ Բագրից մի քանի օրով եկել էր ինձ տեսութեան։

Դաշտը այժմ լուր ու հանդարտ էր։ Դիմացի անհաշիւ, բեկրեկող լոյսերից մեղ բաժանում էր մի խաւար գօտի, որ երեւի, ճանապարհ էր եւ տեղ բռնելու համար խորտուբորտ ու անյարմար։ Զարմանաւի էր, կարծես թէ մթութեան մէջ յիկւած, քարացած հարսանիքի թափոր էր . . .

Պատի տակ նստած աշխատում էի յաղթահարել ինձ համակող թմրութիւնը։ Բայց էլ ուժ չկար։ Տիրական մի քուն նւաճում էր ինձ։

Կուպրի պէս սեւ երկնքում փայլում էին աստղեր : Դաշտում տիրում
էր աստածային անդորրութիւն : Դիմացը հորիզոնաձեւ տարածւած
լոյները մարում , անհետանում էին : Թւռում էր թէ միաժամանակ չը-
քանում են նաեւ լոյսի մօտ եղած մարդիկ : Որքա՞ն տարօրինակ էր
այդ ամենը : Կարծես թէ մէկ լոյսը առանց միւսի չէր կարող վառ
մնալ : Մի պահ նրանք նւազեցին այնքան , որ կարելի էր համրել : Ա-
պա՝ համատարած խաւարը թաղաւորեց ամեն տեղ : Ով ուր էր արդ-
եօք . . .

(Շարունակելի)

